

Գերաշնորհ  
Տ. Թորոզում Արքեպ. Մանուկեան  
Բարեխնամ Առաջնորդ Հիւսիսային  
Ամերիկայի Արեւելեան Թեմի  
Եւ Նախագահ Թեմական Խորհուրդի  
Նիւ Եօրթ.

Սրբազան Հայր:

Ստորագրեալներ՝ տասներեք Թորոնթօյայ սրտցաւ եկեղեցասէր ազգայիններ՝  
այս դիմումնագրով կու գանք խնդրելու Ձերդ Սրբազնութենէն որ արտօնէք մեզի  
կազմակերպելու երկրորդ ծուխ մը Թորոնթօյի մէջ հետեւեալ պատճառներով.-

ա- Մեր գաղութը այսօր կը հաշուէ աւելի քան ութը հազար հոգի եւ մէկ  
եկեղեցին չի կրնար գոհացնել բոլորին կարիքները:

բ- Ս. Երրորդութիւն եկեղեցին թէ շատ նեղ կու գայ եւ թէ շատ հեռու է  
ժողովուրդի զանգուածին համար որ մանաւանդ կեդրոնացած է Ուիլլօտէյլ, Տօն  
Միլզ եւ Սքարպօրօ կոչուող շրջաններուն մէջ:

գ- Ներկայ Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մօտ 350 տրատու անդամներու  
Թիւը շատ քիչ է երբ նկատի ունենանք հոժ հայութիւն մը որ զանազան պատճառ-  
ներով անմասն եւ հեռու կը մնայ նոյն եկեղեցւոյ անդամակցութենէն. մինչդեռ  
երկրորդ ծուխի մը հիմնումով հարիւրաւորներ պատրաստ են իրենց գործօն  
անդամակցութիւնը եւ մասնակցութիւնը բերելու Հայաստանեայց եկեղեցւոյ  
կեանքին:

դ- Դժբախտաբար Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ այժմու ծխական Խորհուրդի  
եւ այլ անձերու վերջին ամիսներու ընթացքին ցուցաբերած խիստ ցաւալի վերա-  
բերմունքը մեր ժողովուրդի զգացումներուն եւ իրաւունքներուն նկատմամբ  
այնքան վիրաւորած եւ վշտացուցած է շատերը որ կորուստ մը պիտի ըլլայ մեր  
եկեղեցւոյ համար մանաւանդ էջմիածնասէր այս զանգուածին հեռացումը:

ե- Գիտենք որ արդէն Ձերդ Սրբազնութեան ալ փափաքն ու հրահանգն էր որ  
Թորոնթօյի մէջ երկրորդ ծուխ մը կազմակերպուէր նկատի առած առաջին երեք  
պատճառները:

*Արդ, Սրբազան Հայր, Վերոյիշեալ բոլոր պատճառները իբր կարելոր հիմ  
ունենալով մենք որպէս հիմնադիր եւ կազմակերպիչ ծխական Խորհուրդ Ձեր  
վաւերացումով եւ օրհնութեամբ պատրաստ ենք ծառայելու Հայաստանեայց եկեղե-  
ցիին, եւ մեր գաղութին: Կը վստահեցնենք Ձեզ որ այսպիսի նորակազմ ծուխի մը  
գործունէութիւնը Ձեր հովանիին տակ, պիտի մեծապէս նպաստէ համայնքիս խաղա-  
ղութեան եւ յառաջդիմութեան: Մենք մեր կողմէ պատրաստ ենք ամէն կերպով  
որպէս քոյր եկեղեցի համագործակցելու Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հետ:*

Այն յոյսով եւ վստահութեամբ որ Ձերդ Սրբազնութիւնը եւ Թեմական Խոր-  
հուրդը պիտի ընդառաջէ եւ վաւերացնէ ներկայ կազմս որպէս նոր ծուխի ծխական  
առաջին Խորհուրդ մեր փափաքն է որ այս ծուխը ճանչցուի Սուրբ Խաչ Հայց.  
Եկեղեցի անունով: Աւելցնենք նաեւ որ եթէ անպատեհութիւն չէք տեսներ,  
մեր եւ ժողովուրդի ցանկութիւնն է նոր ծուխի բացումը կատարել Վերացման  
Ս. Խաչի Տօնին օրը, 17 Սեպտ. 1978-ին:

Սրբազան Հայր, հոս անհրաժեշտ կը սեպենք հաղորդել Ձեզի որ արդէն  
շուրջ 400 երկսեռ անձեր իրենց փափաքը գրաւորապէս մեզի հայտնած են նոր  
ծուխի անդամակցութեան համար, եւ սակայն տակաւին մեր այդ արշաւը կը  
շարունակուի: Նկատի ունենալով նահանգային եւ Դաշնակցային օրէնքները,

անձերու նուիրատուութիւնները ընդունիլ եւ ստացագիր կարենալ տալու համար պատկան իշխանութեանց մօտ մեր տասերեքի անունով դիմում կատարած ենք: Ձերը Սրբազնութեան վաւերացումը ստանալէ յետոյ եթէ անհրաժեշտ կը գտնէք, մենք անմիջապէս Ձեզի կ'ուղարկենք նորագիր անդամներու ամբողջական ցանկը: Մենք կը յուսանք մինչեւ երկու ամիս կրկնապատկել անդամներու թիւը:

Ուրեմն, կը վերջացնենք շերմապէս խնդրելով Ձերդ Սրբազնութենէն լրջօրէն նկատի առնելով ստորագրեալներուս այս դիմումը հաստատելով մեզ որպէս ծխական Խորհուրդ Թորոնթօյի Սուրբ Խաչ Հայաստանեայց Եկեղեցւոյ:

Ստաչելով ի համբոյր Ձեր Սուրբ Աջոցն,

*Սոփթ. Ա. Վարդան Այնաճեան*

Սօցթ. Ա. Վարդան Այնաճեան  
Առժամեայ Ատենադպետ

*Հասկաթ Շար*

Տիար Յակոբ Նար  
Առժամեայ Ատենադպիր-Հայերենի-

*Սուրբնի Հիմարնի*

Տիար Սոքրէն Էվրան  
Առժամեայ գանձապահ

*Սոփթ. Վաչէ Բերամեթլեան*

Սօցթ. Վաչէ Բերամեթլեան  
Հանրային յարաբերութիւն

*Եղիալ Բարսեղեան*

Տիար Եղիա Թորոսեան  
Խորհրդական

*Տիար Երանտէս Երանտէսեան*

Տիար Երանտէս Երանտէսեան  
Ժան Ծէնէրճեան  
Խորհրդական

*Պրն. Անդրանիկ Զաքարեան*

Տիար Անդրանիկ Զաքարեան  
Խորհրդական

*Տիար Էլեոն Եսայիքեան*

Տիար Էլեոն Եսայիքեան  
Առժամեայ Փոխ-ատենապետ

*Սօցթ. Վաչէ Սպաճեան*

Սօցթ. Վաչէ Սպաճեան  
Առժամեայ Ատենադպիր - Անգլերենի-

*Տիար Յակոբ Բէլէշեան*

Տիար Յակոբ Բէլէշեան  
Առժամեայ փոխ-գանձապահ

*Տիար Մարտիկ Հեքիմեան*

Տիար Մարտիկ Հեքիմեան  
Խորհրդական

*Տիար Էլեոն Զեմլէքեան*

Տիար Էլեոն Զեմլէքեան  
Խորհրդական

*Տիար Գրիգոր Մազմանեան*

Տիար Գրիգոր Մազմանեան  
Խորհրդական

Address :

P.O. Box 2387, Station " C ",  
Downsview, Ontario M3N 2V8  
Canada.